

ՄԱՁԵՓՓԱ *

Away ! Away !
Յառա՛ջ ... յառա՛ջ ...
ՊԱՅՐԸՆ («Մագեփփա»)

Ա.

Մագեփփան կալանուա՛ծ ... Մինչ կուլար, կը մորնչէր,
կը կապեն ոտքն ու ձեռք, սրբորն դէմ դէմ մերկ սուսեր,
Մարմինն ալ շրջթալուա՛ծ,
կը յանձնեն նրժոյզին փրփրերախ, կատաղի,
Որ ունդէն կը ժայթքէ ծովուն շունչը աղի,
Պայտէն ալ հուր ու կայծ ...

Օղակներուն տակ ան, օձի պէս դալարուն,
Անդօր՝ իր զայրոյթէն, կը սպառի պարտասուն.
Դա՛հներն՝ երջանիկ
կը շաշեն մրտրակը խօլ ձիուն գաւակին.
Մարդն ահա քրտնաթոր, բերանն ալ՝ փրփրաղին,
Արիւնով աչքն է լիք ...

*) Իվան Սքեփանովիչ Մագեփփա (1644 -- 1709) Լեհաստանի քաղաւոր ժան Քազիմիր Ե-ի արժունիքին մէջ մանկլաւիկ մըն էր նախապէս, յայտնի իր անկարգ կեանքով: Ազնուականի մը կնոջ հետ յանցանքի վրայ բռնուելով, իբրեւ պատիժ զինքը մերկ կը կապեն վայրենի ձիու մը կռնակին ու գայն ազատ կ'արձակեն Ուկրաինական տափաստաններուն մէջ: Այդ դէպքը որ կրնար Մագեփփայի կորուստին պատճառ ըլլալ, ընդհակառակն մեկնակէտը կ'ըլլայ իր փառքին: Արդարեւ ձին կանգ կ'առնէ ուրախ-նական քաղաքներու գիւղի մը մէջ. գիւղացիները զինք վար կ'առնեն, կը խնամեն, կը պատրաստեն: Մագեփփա երախտագիտօրէն կը կապուի զինք փրկող գիւղացիներուն, որոնց պարզ եւ արկածալից կեանքը կը բաժնէ սիրով: Շնորհիւ իր քաջութեան եւ արժանիքներուն կը

բարձրանայ ու կը յաջողի վերջ ի վերջոյ ըլլալ բոլոր քաղաքներու պետը, Հեքմանը:

Ինք մէկն էր Շուէտի քաղաւոր Կարոլուս Ժ-ի զինակիցներէն ու կը պայքարէր Պետրոս Մեծի դէմ: Սակայն Փոլդաւայի պարտութենէն վերջ քոյն առնելով անձնասպան կ'ըլլայ Պէնտերի մօտ:

Իր տրամաբիւք պատիժը եւ փրկութիւնը ներշնչումի աղբիւր մ'եղած է արուեստագէտներուն: Մէկէ աւելի յայտնի նկարներ կան այդ դրուագը պատկերացնող: Պայրըն իր 1 մասին տրամա մը գրած է: Վիստոր Հիւկօ ալ վերոյիշեալ բերքուածով խորհրդանշական իմաստ մը տուած է նոյն դիպումին:

Այս կտորը Հիւկոյի «*Les Orientales*» բերքողագրքին յատկանշական եւ ամենէն գեղեցիկ կտորներէն մէկն է:

Ծ. Թ.

Ճիշ մ'ահա, ու յանկարծ, այնտե՛ղ, դաշտերն ի վար,
 Ե՛ւ ձին ե՛ւ մարդն իր վրայ չնշահեղձ, հողմավար,
 Աւաղներէն անդին,
 Միայնակ, մեծաթխոր փոշիի ուրական,
 Սեւ ամպ, ուր կայծակներ ինչպէս օձ կը զետան,
 Հովուն հետ կը թըռին ...

Կ'երթան: Խոր ձորերէն փոթորիկն է կ'անցնի.
 Թաթառն որ կը խուժէ լերանց մէջ հոլանի
 Իրեւ գունդ հըրավառ:
 Ու հիմա, սեւ կէտ մ'են՝ միզամած մութ հեռուն,
 Որ ինչպէս ձիւն - փրփուր կ'անհետին հոն իսկոյն,
 Այնտեղ, լայն ծովն ի վար:

Կ'երթան: Միջոցն է լայն: Անապատ անբաւար.
 Հորիզոնն անբակից կ'աճի, չի՛ վերջանար,
 Ուր իրենք կ'ընկըմին:
 Կը թըռին, կը սուրա՛ն ... Կաղնիներ գիժ, հըսկայ,
 Քաղաք, բերդ եւ պարիսպ, լեռներու բիւր շրջթայ,
 Կ'երեւան շուրջերնին:

Երբ կալանաւորն հէք, որու գանկն է ջախջախ,
 Գէթ փորձէ գալարուիլ, նըժոյգը բոցերախ,
 Սըլացքով մ'ահարեկ
 Կը խուժէ ու կ'ոստնու ... Դաշտն է լայն, անել, լուռ,
 Որ իրենց առջեւ միշտ կը փրէժ ծրփանքն հուր
 Աւաղին ատրաշէկ:

Ամէն ինչ կը դողայ. կ'այրին գոյներ անյայտ.
 Կը փախին ծառ, պուրակ, ամպերը լուրթ, անգայտ,
 Հին, աւեր աշտարա՛կ.
 Կը յառի մարդն իր շուրջ արփազեղ սարերուն.
 Կը տեսնէ ետեւէն, հետապինդ, հոն հեռուն
 Նըժոյգներ ծրխարձա՛կ ...

Ու երկինքն ուր արդէն գիշերն է ծաւալուն,
 Ուր ամպեր վէտ ի վէտ կ'յաջորդեն ամպերուն,
 — Ովկէա՛ն վերամբարձ ... —
 Արեւն ալ, նաւ հըսկայ, կը սուղէ ցըռուկն իր
 Ծոցն ամպերուն, եւ զերդ մարմար գունդ ոսկեծիր
 Կ'արշաւէ յարադարձ ...

Աչքն իր կը մոլորի, կը փայլի. հերարձակ
Գունդն առկախ կ'օրօրուի. իր ճամբուն՝ փուշ, տատասկ
Կ'ոռոգուին արիւնով :
Պալարուն մորթին շուրջ, պարանն օղակ օղակ,
Կ'ոլորի, կը ձրդտի. եւ օձի հանդունակ
Կը սեղմէ իր ժանին :

Ձին՝ որ ո՛չ սանձ, ո՛չ թամբ կը դգայ իր քամակին,
Կ'արշաւէ՝ ... վէրքերէն արիւններ կը ժայթքին,
Միտերն են պատառո՞ւն ...
Աւա՛ղ, զինք հալածող զամբիկներ դեռ կուգա՞ն,
Բաշերնին՝ հովերուն, ու, յետոյ, կռին՝ զուժկա՞ն,
Երա՛մն ազոաներուն ...

Ազոաներ, ու մեծ բուն, կլորակը, մահադէմ,
Թաղմաղաշտի արծիւն, ոսկորկուլն ալ դըժխեմ,
— Յայգային ի՞նչ հըրէշ, ---
Բըւէճներ նենգամիտ, եւ անդղեր արիւնոռչտ,
Որ պատռել կը սիրեն զոհերուն կողն ու կուշտ,
Բըզըկտել գի եւ զէշ ...

Ամենն ալ կը փութան մասնակցիլ սըղերթին.
Կը լըքեն ժայռ ու ծերպ, մենաւոր ցարասին,
Բոյնն իրենց տընաւեր :
Ի՛նք, խուլ՝ այդ ցընծերդին, արնաքամ ու մոլոր,
Հարց կուտայ իւրովի. « Ո՞վ այս սեւ հովա՛հար
Իմ վերեւ է բացեր ... »

Կը լայննայ ցայդն ահա աստղազուրկ, անյատակ.
Երամն այն զիշախանձ, — թեւաւոր, դոռ վոհմա՛կ, ---
Կը խուժէ, կ'ընդլայնի.
Երկնի եւ իր միջեւ, որպէս մութ, խուլ յորձանք
Կ'երեւի, կ'անհետի, կը սըփռէ արձաղանդ,
— Խուճա՛ւ րիւրթեանի ...

Վերջապէս երեք օր ետք այդ խենթ արշաւէն,
Անցնելով սառ գետեր, ամայութիւնն ամէն,
Դաշտ եւ լեռ եւ անտառ,
Ձին ահա կը կասի, — ի՞նչ հեշտոնք՝ վոհմակին, ---
Ձին ահա կը փրլի ... պայտերէն կը ժայթքին
Հըրթիւններ կիսամար ...

Եղկելին ալ ահա՛, գետնամած, մերկ, թըշուառ,
Արնաթոր, աւելի կարծիր քան ծաղկավառ
Վարդենին դարնային :
Թրոշնոց պարն օղածեմ կը դառնայ, կանդ կ'առնէ,
Յանկալով կըրծոտել իր գանկին մէջ դըժնէ
Աչքերն ու ոսկրոտին :

Ո՛հ, ինչ փո՛յթ . . . : Մահապա՛րտն որ կ'ոռնայ սողալէն,
Զինք, ողջ դիա՛կ, ցեղերն Ուկրանեոյ պիտ' ընտրեն
Օր մ'իրենց գերիշխան .
Օր մ'այո՛, սրիւնելով դաշտերուն բիւր դիակ,
Զանոնք իբր հատուցում, պիտի տայ, ցոփ ճարակ
Անգղերուն այն դաժան :

Տանջանքէն իր պիտի յառնէ փառքն ամեհի .
Օր մ'ան հեթմաններու խոյրով պիտի պսակուի,
Շլացնելով ողջ աշխարհ .
Ու երբ անցնի, ցեղերն ամբողջ վըրանարնակ,
Իր առջեւ գետնամած, պիտ'հնչեն փող - նըւադ,
Յաղթերդներ մեծափառ . . .

Բ.

Այսպէս՝ մարդն ալ որուն վրայ կ'տիրէ իր աստուած,
Երբ կը զգայ զինքը՝ ողջ՝ դաւակիդ կապկապուած,
Ո՛վ հանճար, --- քոց նըժոյգ, ---
Ի դո՛ւր կը մաքառի . . . Զինք քեզ հետ, թեւաւոր,
Կը հանես դուրս երկրէս, փշրելով դուռն անոր՝
Պայտերուդ տակ առոյգ :

Կը ճեղքես, մարդն ուսիդ, անասլատ, լեռ ու սար,
Հինաւորց դադաթներ եւ ծով, եւ ամպածրար
Միջոցներն ահաւոր .
Հազար պիղծ ոգիներ սըլացքէդ կ'արթննան,
Ճամբորդին շուրջն ահա, --- դըրոհ ապերասան, ---
Կ'աճապարեն բոլոր .

Մէ՛կ սլացքով ան կ'անցնի, թեւերովդ հըրաւառ,
Կարելի ամէն դաշտ, հոգեկան ողջ աշխարհ,
Յաւերժի գետն ըմպած :
Գիշերուան մէջ մըռայլ, գիշերուան մէջ փաղփուռ,
Մազերը՝ խառնուած գիսաւոր աստղերուն,
Կը շողան երկնայած :

Վեց լուսինն Հերչելի, մանեակն Երեւակին,
 Բեւեռը եւ իր շուրջ հիւսիսայլ ցայղային,
 Կը տեսնէ ամէնն ալ ...
 Կը տեսնէ տակաւին, որ վաղքէդ անյեղլի
 Ամէն պահ, անդադար, աշխարհի կ'այլայլի
 Հորիզոնն խտէալ:

Դեւերն ու ոգիներն երկնային դիտեն լոկ
 Քեզ կապուած էակին տառապանքն ու մորմոք,
 --- Բիւր շանթեր դինք խոցող. ---
 Թէ ինչպէս ան կ'այրի բոցերէ խանդավառ,
 Թէ, աւա՛ղ կ'իջնեն ի՛նչ թեւեր սառ, ցըրտահար
 Իր ճակտին մըթասքող.

Ան, դողդոջ կը պոռայ. դուն, անյիտիթ, կ'արշաւես.
 Ան, տըժդոյն, ուժասպառ, թեւիդ տակ ողջակէզ,
 Ահուդող՝ կը տըքայ ...
 Կը սուրաս դուն եւ ան մահուան կը մօտենայ.
 Վերջապէս, հանդրուա՛ն ... կ'երերայ ու կ'իյնա՛յ.
 Ու ... կը կանգնի՛ արքա՛յ ...

ՎԻՔԹՈՐ ՀԻԻԿՈ

1828, Մայիս

Հայացուց՝ ՓԱՅԼԱԿ ՍԱՆԱՍԱՐ

